

Գաղտնիության քաղաքականություն

«ԳՈՒԴԿԸԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲ ընկերությունը (գրանցման համար՝ 21, հասցե ՀՀ, քաղաք Երևան. Կ. Ուլնեցու 58/1) (այսուհետ ԳՈՒԴԿԸԵԴԻՏ և/կամ մենք), հանդիսանում է այս կայքից օգտվելու և մեր ծառայություններից օգտվելու կապակցությամբ անձնական տվյալներ մշակելու վերահսկողը:

Մենք հարգում ենք Ձեր անձնական կյանքի գաղտնիությունը և հանձնառու ենք Ձեր անձնական տվյալների օրինական մշակման և պահպանման, ինչպես նաև օրենքի պահանջներին համապատասխանելու համար: Մեր Գաղտնիության քաղաքականությունը մանրամասն ներկայացնում է թե Ձեր ինչպիսի անձնական տվյալներ կամ այլ տեղեկություն Դուք պետք է տրամադրեք կամ մենք կարող ենք հավաքագրել Ձեզանից:

Գաղտնիության քաղաքականությունը կարող է փոփոխվել, հետևաբար անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ ընթերցել այն: Սույն գաղտնիության քաղաքականությունը վերջին անգամ փոփոխվել է 16.11.2016-ին:

Սույն գաղտնիության քաղաքականությամբ նշված մեր ընկերությունների խումբը նշանակում է 4finance Group S.A.-ն (գրանցված Լյուքսեմբուրգի Մեծ Դքսությունում, գրանցման համար՝ B 195643, հասցե՝ Գիյոմ Շնեյդերի 6, L-2522, Լյուքսեմբուրգ) և ընկերություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում են վերջինիս կամ հսկվում են նրա կողմից և մասնավորապես.

- AS "4finance", Լիլրբու 17A-8, Ռիգա, LV-1046, Լատվիա
- SIA "4finance Media", Լիլրբու 17A-10, Ռիգա, LV-1046, Լատվիա
- SIA "4finance IT", Լիլրբու 17A-10, Ռիգա, LV-1046, Լատվիա և Եվրոպական Միությունում գտնվող նրա մասնաճյուղերը
- 4f Sales, Inc., 18851 NE 29-րդ Պողոտա, բն. 410, Մայամի, ՖԼ 33180, ԱՄՆ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել <http://www.4finance.com>:

1. Հավաքագրված տեղեկատվություն

1.1 Տեղեկատվությունը, որը մենք սովորաբար հավաքագրում ենք, երբ Դուք դիմում եք մեր ծառայություններից օգտվելու համար, հետևյալն է՝ անուն, ազգանուն նույնականացման համար, հասցե, էլեկտրոնային հասցե, բջջային հեռախոսահամար, ծննդյան ամսաթիվ, զբաղվածության կարգավիճակ, գործատուի անուն, , ամսական եկամուտ, մեզ հետ կապի ձայնագրություններ և ձայնային կենսաչափական տվյալներ, Ձեր նկարը կամ լուսանկարը, Ձեր անձը հաստատող փաստաթղթի նկարը, տեղեկատվություն մեր կամ երրորդ անձանց նկատմամբ ունեցած Ձեր ընթացիկ և անցյալում ունեցած պարտավորությունների մասին, ցանկացած այլ տեղեկատվություն, որ Դուք կտրամադրեք մեզ Ձեր անձնական էջի, «LiveChat»-ի, հեռախոսի,

Էլեկտրոնային փոստի և ֆաքսի կամ կապի ցանկացած այլ միջոցի օգտագործմամբ, և որը կարող է կարևոր լինել պարտավորությունների կատարման համար:

1.2 Տեղեկատվությունը կարող է հավաքագրվել և մշակվել մեր կայքում Ձեր անձնական էջի ստեղծման և գործարկման, ինչպես նաև հետագայում մեր ծառայություններից օգտվելու համար: Մենք կարող ենք կատարել այդ գործողությունները ստորև ներկայացված եղանակով:

- Մենք հավաքագրում ենք մեր կայք կատարած Ձեր այցի (այցերի) կամ Ձեր օգտագործած ռեսուրսների վերաբերյալ տեղեկատվությունը: Այն ներառում, բայց չի սահմանափակվում հետևյալով՝ տեղակայման տվյալներ (location data), ցանցային գրանցամատյաններ (weblogs), տեղեկատվական հոսքի (traffic data) և հաղորդակցման ցանկացած այլ տվյալներ (Տես Տեղեկանիշերի (Cookies) օգտագործման մասին 8-րդ բաժինը):
- Մեր կամ մեր գործընկերների կայքում լրացված ցանկացած ձևաթուղթ թույլ է տալիս մեզ հավաքագրել տեղեկատվություն մեր ծառայությունները գնահատելու համար:
- Մեր անձնակազմի հետ ցանկացած նպատակով կապ հաստատելու դեպքում (ներառյալ Էլեկտրոնային հասցե, հեռախոս, «LiveChat»), մենք կարող ենք հավաքագրել Ձեր հայտնած տեղեկությունները:
- Համապատասխան պետական կամ մասնավոր կազմակերպություններից, գրանցամատյաններից, գործակալություններից և այլ երրորդ անձանցից մենք հավաքագրելու ենք Ձեր վարկային պատմության, եկամտի, ֆինանսական վիճակի, Ձեր նկատմամբ վարույթների կամ ցանկացած այլ տեղեկատվություն, որը մենք անհրաժեշտ և տեղին կհամարենք Ձեզ հետ գործարար հարաբերություններ վարելու համար:

2. Մշակման հիմքեր և նպատակներ

2.1 Մենք մշակում ենք Ձեր անձնական տվյալները «Անձնական Տվյալների Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն, ըստ որի տվյալների մշակումը առաջանում է պայմանագրային պարտավորություններից կամ Ձեզ հետ կնքվելիք վարկային պայմանագրից: Տվյալների մշակումը կատարվելու է մեր օրինական շահերին ծառայելու համար՝ միաժամանակ հարգելով Ձեր հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Մենք կարող ենք մշակել Ձեր տվյալները նաև Ձեր տված համաձայնության հիման վրա:

2.2 Հավաքագրած անձնական տվյալները գրանցվելու և պահպանվելու են Էլեկտրոնային և/կամ թղթային տարբերակով ու կարող են օգտագործվել հետևյալ կերպ՝

- Մինչև պայմանագրային պարտավորություններ ստանձնելը Ձեր ինքնությունը հաստատելու համար, սա կարող է ներառել նաև դեմքի ճանաչման և ձայնի կենսաչափական տեխնոլոգիաների օգտագործումը:
- հետագայում վարկային ստուգումներ իրականացնելու, Ձեր վարկունակությունը գնահատելու և համապատասխան ծառայություններ առաջարկելու համար:

- Հայտնաբերելու և կանխարգելելու ցանկացած զեղծարարություն, փողերի լվացման կամ այլ հանցավոր գործունեություն:
- Ձեզ հետ կապ հաստատելու, այդ թվում մեզ, մեր ծառայություններին և մեր պայմանագրային հարաբերություններին վերաբերող փոփոխությունների մասին տեղեկացնելու համար:
- Վերականգնելու մեր նկատմամբ ունեցած ցանկացած պարտավորություն:
- Մեր ծառայությունների որակը ապահովելու և բարելավելու համար:
- նոր ծառայություններ ստեղծելու և առաջարկելու համար:
- Վիճակագրական և շուկայի ուսումնասիրության նպատակներով:
- Մեր սեփական, մեր խմբի ընկերությունների և համապատասխան երրորդ անձանց պրոդուկտների և ծառայությունների գովազդման համար, ներառյալ՝ մեր առաջարկները Ձեր կարիքներին համապատասխանեցնելու համար:
- Ձեր նկատմամբ ունեցած մեր պարտավորությունների կատարման համար:
- Նույնականացման, ռիսկերի և վարկունակության գնահատման, խարդախությունների կանխարգելման, փողերի լվացման դեմ պայքարի հետ կապված նոր տեխնոլոգիաների տեստավորման, թարմացման և իրականացման համար: Ձեզ հետ մեր ունեցած հարաբերությունների հետ կապված ցանկացած այլ օրինական օգտագործման համար:

3. Տեղեկատվության օգտագործումը և բացահայտումը մեր կողմից

3.1 Մենք կարող ենք բացահայտել Ձեր անձնական տվյալները մեր խմբի ընկերություններին, ինչը մեզ կօգնի մատուցել ծառայություններ և մշակել նորերը, իրականացնել մեր ծառայություններից օգվելու վերաբերյալ վերլուծություններ և օժանդակել մարքեթինգային գործունեությանը: Մենք կարող ենք Ձեր տվյալները փոխանցել այնպիսի երրորդ անձանց, ովքեր մեր անունից ծառայություններ են մատուցում օժանդակելու համար մեր բիզնես գործունեությանը, այնպիսիք, ինչպիսիք են կայքի հոսթինգը և զարգացումը, ռիսկերի գնահատումը և խարդախությունների կանխարգելումը, պարտքի հավաքագրումը և հաճախորդների սպասարկումը:

Տվյալների փոխանցման դեպքում մենք երաշխավորում ենք, որ տվյալներ ստացողը ստանձնի անվտանգության միևնույն միջոցառումները անձնական տվյալների մշակման և պահպանման համար: Այն դեպքում, երբ մենք ցանկանանք օգտագործել կամ բացահայտել Ձեր անձնական տեղեկատվությունն այնպիսի նպատակով որն անհամատեղելի է դրա՝ ի սկզբանե հավաքման կամ հետագայում Ձեր կողմից լրացուցիչ թույլատրված նպատակի հետ, մենք կտեղեկացնենք Ձեզ, և ձեզ հնարավորություն կտանք դադարեցնել այդպիսի օգտագործումը կամ բացահայտումը:

3.2 Մենք կարող ենք բացահայտել Ձեր անձնական տվյալները երրորդ կողմին հետևյալ դեպքերում և կարգով:

3.2.1 Երրորդ կողմին մեր բիզնեսը մասնակի կամ ամբողջությամբ վաճառելու դեպքում:

3.2.2 Օրենքով սահմանված ցանկացած դեպքում, ինչպիսիք են իրավական որևէ ընթացակարգին համապատասխանելու դեպքերը, երբ մենք ողջամտորեն համոզված ենք, որ տեղեկատվության բացահայտումն անհրաժեշտ է մեր իրավունքները, Ձեր կամ երրորդ անձանց անվտանգությունը պաշտպանելու, խարդախությունների հետաքննման և կառավարության հարցումներին պատասխանելու համար, մենք կարող ենք բացահայտել ինչպես Ձեր մասին, այնպես էլ մեր ընկերություն, կայք էջ կատարած Ձեր այցելությունների մասին տեղեկատվությունը:

3.2.3 Տվյալների բացահայտում կարող է լինել գեղծարարության դեպքերի կանխարգելման համար՝ վարկային ռիսկի նվազեցման նպատակով:

3.2.4 Մենք կարող ենք տրամադրել Ձեր անձնական տվյալները նմանատիպ ծառայություններ մատուցող կազմակերպություններին, ինչպիսիք են սպառողական վարկավորում իրականացնող ընկերություններն ու վարկային բյուրոները, ինչպես նաև համապատասխան պետական մարմիններին և ոչ պետական կազմակերպություններին, որպեսզի ապահովվի Ձեր վճարունակության ամբողջական գնահատումը:

3.2.5 Ձեր վարկային պայմանագրից բխող պարտքերի կամ այլ վճարումների հավաքագրման ընթացքում մենք կարող ենք տրամադրել Ձեր անձնական տվյալները վճարներ հավաքագրող և վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններին:

3.2.6 Ձեր Վարկային պարտավորությունները Ձեր կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում մենք կարող ենք Ձեր առկա պարտավորությունների վերաբերյալ տվյալները փոխանցել արտադատական կարգով պարտքերի հավաքագրման ծառայություններ մատուցող կազմակերպություններին, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցողներին:

3.2.7 Ցանկացած այլ դեպքում, որ մենք անհրաժեշտ և տեղին կհամարենք Ձեզ ծառայություններ մատուցելիս:

3.3 Ձեր անձնական տվյալները կարող են մշակվել, պահվել և տրամադրվել երրորդ կողմին սույն թաստաթղթով, մեր և Ձեր միջև կնքված պայմանագր(եր)ով, և Ձեր կողմից ժամանակ առ ժամանակ մեզ տրված համաձայնություններով սահմանված կարգով:

3.4 Դուք տալիս եք Ձեր անվերապահ համաձայնությունը, որ Ձեզ նույնականացնելու, Ձեր վարկային հայտը քննարկելու, Ձեզ հետ վարկային պայմանագիր կնքելու նպատակով, ինչպես նաև հետագայում՝ վարկային պայմանագրի գործողության ընթացքում մեր կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ անձանց պատկանող տեղեկատվական համակարգերին հարցում ուղարկվի Ձեր անձնական տվյալների մասին և որ հարցմանն ի պատասխան, Ձեզ նույնականացնելուց հետո, անձնական տվյալներ մշակող մարմինները և անձինք իրենց տվյալների բազաներում պահպանվող Ձեր ցանկացած անձնական տվյալ փոխանցեն մեզ: Հարցված անձնական տվյալները պահպանվելու են առնվազն 5 տարի ժամկետով կամ ՀՀ օրենքներով կամ այլ իրավական ակտերով սահմանված այլ ժամկետով: Դուք

կարող էք ցանկացած ժամանակ պահանջել դրանց ուղղում կամ ոչնչացում, որի հետևանքների մասին Ձեզ լրացուցիչ կտեղեկացվի:

3.5. Ձեր գրավոր դիմումի համաձայն մենք հնարավորության դեպքում կոչնչացնենք Ձեր անձնական տվյալները մեր և մեր գործընկերների տվյալների բազայից, եթե Ձեր անձնական տվյալների մշակումը դրանց հավաքագրման նպատակին՝ ներառյալ մեր պայմանագրային և այլ իրավունքների կիրառումն ու գործող օրենքի պահանջները կատարելուն, այլևս չի ծառայում:

4. Անձնական տվյալների պահպանում և փոխանցում

4.1 Մեզ տրամադրված տեղեկատվությունը կպահպանվի ապահով սերվերի վրա: Ձեր անվտանգության համար Ձեր տվյալները և գործողությունները գաղտնագրվում են:

4.2 Ձեր մասին սույն փաստաթղթում նշված նպատակով հավաքագրվող տվյալների փոխանցման, պահպանման և մշակման համար կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս վայրեր: Այն տեղեկությունները, որոնք մենք տրամադրում ենք Հայաստանի Հանրապետությունից դուրս, կարող են տրամադրվել մեր ծառայություններ մատուցողներին: Դա կարող է ներառել այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են՝ վճարում կատարելը, տվյալների վերլուծությունը (ներառյալ խարդախության, ռիսկայինության և վարկային ստուգումները), մեր ինտերնետային կայքերի և ծառայությունների օգտագործման վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելը, գովազդի նպատակներով (ներառյալ վարքագծային գովազդ) կամ Ձեզ ծառայության կամ ապրանքների հետ կապված օգնություն տրամադրելը: Մեր ծառայություններից օգտվելու նպատակով Ձեր տվյալները տրամադրվելով՝ Դուք համաձայնում եք այդ տվյալների փոխանցմանը և հավաքագրմանը: Մենք ձեռք ենք առնում բոլոր ողջամիտ միջոցները Ձեր անձնական տեղեկությունների անվտանգությունն ապահովելու համար՝ «Գաղտնիության Քաղաքականության» և կիրառելի իրավական ակտերի հետ համաձայն:

4.3 Մենք գործադրում ենք ողջամիտ ջանքեր մեր համակարգերի անվտանգությունն ապահովելու համար: Դուք պետք է այնուամենայնիվ գիտակցեք, որ տվյալների փոխանցումը առցանց տեղափոխման միջոցով բացարձակ անվտանգ չէ: Մենք չենք կարող ապահովել և երաշխավորել տվյալների ամբողջական պահպանությունն ու անվտանգությունը, սակայն մենք հանձն ենք առնում խելամիտ գործողություններ՝ էլեկտրոնային ճանապարհով մեզ ուղարկված տեղեկատվության պահպանման համար: Ձեր կողմից տվյալների փոխանցման ռիսկը Դուք եք կրում: Ձեր անձնական էջ մուտք գործելու համար Ձեզ հնարավորություն կընձեռվի ստեղծել լոգին (login) և գաղտնաբառ: Դուք պատասխանատու եք դրանց անվտանգության և գաղտնիության համար:

5. Տեղեկատվության հասանելիություն, ուղղում և թարմացում

5.1 «Անձնական Տվյալների Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն մենք պարտավոր ենք Ձեր պահանջով Ձեզ տրամադրել Ձեր տվյալների մշակման նպատակով հավաքագրված տեղեկություններին հասանելիության, դրանց ուղղման և

թարմացման իրավունք, ինչպես նաև տեղեկություն այն ֆիզիկական և իրավաբանական անձանց մասին, ովքեր սահմանված ժամկետում տեղեկություն են ստացել Ձեր մասին, եթե տվյալների բացահայտումը արգելված չէ օրենքով: Դուք իրավունք ունեք անվճար ստանալ այս տեղեկությունները՝ պայմանով, որ նման հասանելիությունն ապահովելու համար մեզ բավականաչափ ժամանակ է հատկացված:

Սույն կետում նշված տեղեկությունները ստանալու պահանջը ներկայացնելու համար խնդրում ենք գրավոր դիմել ք. Երևան, Կ. Ուլնեցու 58/1 հասցեով: Տեղեկությունները կտրամադրվեն Ցիտադել մասնաճյուղում (ք, Երևան, Տերյան 105/1) կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

5.2. Դուք պետք է տեղեկացնեք մեզ հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու կամ հետագա համագործակցության ընթացքում Ձեր կողմից մեզ տրամադրված տեղեկատվության փոփոխությունների մասին, ինչպես նաև այն դեպքերի մասին, երբ Դուք կարծում եք, որ Ձեր անձնական տվյալները, մենք ոչ ճիշտ ենք մշակում:

6. Հղումներ Երրորդ անձանց ինտերնետային կայքերին

Մեր կայքում կարող եք գտնել հղումներ երրորդ անձանց ինտերնետային կայքերին: Դրանք ունեն գաղտնիության իրենց քաղաքականությունները, որոնց Դուք համաձայնում եք հղման վրա սեղմելով: Մենք պատասխանատու ենք միայն մեր կայքի համար և պատասխանատվություն չենք կրում երրորդ անձանց հղումների համար, քանի որ չենք վերահսկում դրանք:

7. Առևտրային հաղորդակցություն

7.1 Մեր կայք այցելելով, Ձեր անձնական և կոնտակտային տվյալները տրամադրելով՝ Դուք ընդունում եք Ձեզ մեր ծառայությունների և պրոդուկտների մասին կոմերցիոն բնույթի տեղեկություններ (ծանուցումներ, նամակներ) ուղարկելու մեր իրավունքը:

7.2 Սույն Գաղտնիության Քաղաքականությանը համաձայնություն տալու դեպքում դուք համաձայնում եք մեզանից և մեր խմբի ընկերություններից ստանալ գովազդներ և արժեքավոր օգտակար տեղեկություններ, ինչպես նաև ուղղակիորեն լիազորում եք մեզ և մեր խմբի ընկերություններին ուղարկել Ձեզ նորություններ և մարկետինգային առաջարկներ մեր սեփական պրոդուկտների և ծառայությունների մասին: Այդ տեղեկատվությունը կարող է առաքվել ժամանակ առ ժամանակ էլեկտրոնային փոստով, կարճ հաղորդագրություններով (SMS), փոստով կամ հեռախոսազանգերով. Դուք նաև լիազորում եք մեզ մեր խմբի ընկերություններին փոխանցել Ձեր անձնական տվյալները, որն անհրաժեշտ է Ձեզ նորություններ և առաջարկներ պատրաստելու և ուղարկելու համար (օրինակ՝ անունը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը): Ձեր անձնական տվյալները միայն կբացահայտվեն տվյալների պաշտպանության մասին կիրառելի օրենսդրությանը, այդ թվում՝ անհատական տվյալները երրորդ երկրներ փոխանցելու պահանջներին համապատասխան:

Ցանկացած ժամանակ Դուք կարող եք հրաժարվել նման տեղեկությունների և առաջարկների ստացումից՝ այցելելով Ցիտադել մասնաճյուղ, հեռախոսի 098588005) կամ էլեկտրոնային փոստի (customersupport@goodcredit.am..) միջոցով:

Ձեր հարցումը մշակելուն պես մենք կդադարեցնենք Ձեզ մարքեթինգային առաջարկներ ուղարկելը: Տեղեկացնում ենք, որ Ձեր հարցման մշակումը կարող է տևել մինչև մեկ օր:

8. Տեղեկանիշերի (Cookies) օգտագործում

8.1 Մենք և մեր գործընկերներն օգտագործում ենք տեղեկանիշեր (Cookies) կամ նմանատիպ այլ տեխնոլոգիաներ միտումները վերլուծելու, կայքը կառավարելու, կայքում օգտատերերի շարժին հետևելու և մեր օգտատերերի հենքի՝ որպես ամբողջության մասին ժողովրդագրական տեղեկություններ հավաքելու համար: Տեղեկանիշը փոքր տվյալ է, որը կայքը ուղարկում է ցանցի բրաուզերին, որն էլ իր հերթին պահպանում է դրանք Ձեր համակարգչի կոշտ սկավառակի վրա: Տեղեկանիշերը հնարավորություն են ընձեռում այցելուներին ուսումնասիրել կայքը և (եթե կիրառելի է) հնարավորություն է ընձեռում կայքը հարմարեցնելայն այցելուների պահանջներին և կարիքներին: Եթե տեղեկանիշերն անջատված են, մենք չենք կարող երաշխավորել կայքի անխափան օգտագործումը: **Մեր կայքում օգտագործվող տեղեկանիշերը չեն պահպանում նույնականացման տվյալներ: Հավաքագրված տեղեկատվությունը չի փոխանցվի երրորդ անձանց, բացառությամբ սույն քաղաքականությամբ նկարագրված դեպքերի: Ցանկացած տեղեկություն, որը կարող է նույնականացնել Ձեզ, չի բացահայտվելու:**

8.2 Այս կայքում տեղեկանիշերը օգտագործվում են հետևյալ կերպ՝

8.2.1 Մենք օգտագործում ենք տեղեկանիշերը մեր հաճախորդներին պաշտպանելու և գեղծարարության դեպքերը կանխարգելելու նպատակով:

8.2.2 Մենք օգտագործում ենք տեղեկանիշերն առցանց հայտերի լրացման համար: Եթե տեղեկանիշերը միացված չեն, համակարգչի օգտատերը չի կարող մուտք գործել և/կամ օգտավել մեր ծառայություններից:

8.2.3 Մենք օգտագործում ենք տեղեկանիշերը տեղեկանալու և ուսումնասիրելու համար, թե ինչպես են օգտատերերը այցելում և օգտագործում մեր կայքը: Այն օգնում է բարելավելու Ձեզ մատուցվող ծառայությունների որակը: Օրինակ, մենք օգտագործում ենք Google Analytics, որը Google-ի կողմից մատուցվող ցանցային կատարողականի վերլուծության հայտնի ծառայություն է: Այն օգտագործում է տեղեկանիշերը՝ մեզ օգնելով վերլուծելու, թե ինչպես են այցելուները

օգտագործում մեր կայքը: Տեղեկանիշերի մասին հավելյալ տեղեկություն կարող եք ստանալ սեղմելով հետևյալ հղումը՝ [Google's Privacy policy](#).

8.2.4 Մենք օգտագործում ենք տեղեկանիշերը կայքի տվյալների հոսքի վերահսկման և կառավարման համար:

8.2.5 Մենք օգտագործում ենք տեղեկանիշերը մեր գովազդային արշավների հաջողության մակարդակը որոշելու համար: Այն օգնում է մեզ բարելավել ինչպես կայքի կառուցվածքը, այնպես էլ մեր կողմից ներկայացվող հատուկ առաջարկները:

8.3 Մեր կայքում մենք օգտագործում ենք երկու տեսակի տեղեկանիշեր:

8.3.1 Ժամանակավոր տեղեկանիշ. Սրանք տեղեկանիշեր են, որոնք ակտիվ են միայն այն ժամանակ, երբ օգտատերը մուտք է գործում կայք (կամ, ավելի հստակ, մինչ այն պահը, երբ օգտագործողը լքում է կայքը և փակում բարուղերը): Ժամանակավոր տեղեկանիշերը օգնում են մեր կայքին հիշելու այն քայլերը, որոնք այցելուն կատարել է նախորդ էջում, այսպիսով վերացնելով տեղեկությունը նորից մուտքագրելու կարիքը:

8.3.2 Հիմնական տեղեկանիշեր: Այս տեղեկանիշերը մնում են այցելուի համակարգչի մեջ մեր կայք այցելելուց հետո: Սրանք մեզ օգնում են ճանաչել Ձեզ որպես այցելու (պահպանելով այս տեղեկությունը որպես պատահականության սկզբունքով գեներացվող համար): Կախված տեղեկանիշի տեսակից դրա պահպանման ժամկետը օգտատիրոջ համակարգչի մեջ կարող է տարբերվել:

8.4 Տեղեկանիշերի օգտագործման համաձայնություն. Նախքան մեր կայքը օգտագործելը մենք պետք է Ձեզանից ձեռք բերենք տեղեկանիշերի օգտագործման համաձայնություն: Ուստի, մեր կայքը ունի հիշեցման պատուհան, որը տեղեկացնում է Ձեզ տեղեկանիշերի օգտագործման մասին, և խնդրում հաստատել դրանց օգտագործումը՝ "OK" սեղմելով: Եթե Դուք չհաստատեք տեղեկանիշերի օգտագործումը, բայց շարունակեք օգտագործել կայքը, կնշանակի, որ Դուք համաձայնել տեղեկանիշեր օգտագործելուն:

8.4.1 Տեղեկանիշերի վերահսկում և ոչնչացում: Մենք չենք օգտագործում տեղեկանիշերը օգտատերերի անձնական տվյալները հավաքագրելու համար: Այդուհանդերձ, եթե Դուք ցանկանում եք սահմանափակել կամ արգելափակել տեղեկանիշերը մեր կամ այլ կայքի համար, Դուք կարող եք փոխել Ձեր բրաուզերի կարգավորումները: Այս հնարավորության մասին ավելին իմանալու համար օգտագործեք բրաուզերի "Help" գործառույթը: Ձեր սարքից տեղեկանիշերի ոչնչացման համար, խնդրում ենք օգտվեք տվյալ սարքի ուղեցույցից:

9. Հետևելը (Tracking)

Ինչպես կայքերի մեծամասնության պարագայում, մենք նույնպես հավաքում ենք որոշակի տեղեկատվություն ինքնաշխատ ձևով: Այդ տեղեկատվությունը կարող է ներառել ինտերնետային կանխագրի (Internet protocol (IP)) հասցեները, բրաուզերի տեսակը, Ինտերնետ ծառայությունների մատակարարին (պրովայդերի, ISP), հղման/էլքի էջերը, մեր կայքում դիտված ֆայլերը (օրինակ՝ HTML էջերը, գրաֆիկան և այլն), օպերացիոն համակարգը, օրվա/ժամի նշումը և/կամ քլիքսթրիմ (clickstream) տվյալները՝ համախառն միտումները վերլուծելու և կայքը կառավարելու համար:

Թեև մենք պահպանում ենք այն վեբ էջերի հետագիծը (track), ուր մեր օգտատերերը կոնկրետ կայքի ներսում այցելում են, այնուամենայնիվ մենք ներգրավված չենք ժամանակի ընթացքում և երրորդ կայքերի կամ առցանց ծառայությունների շրջանում Ձեր առցանց գործունեության մասին անձնական տեղեկատվության հավաքագրման մեջ: Հետևաբար մենք ներկայումս չենք կիրառում և հետևում վեբ բրաուզերի «do not track» ազդանշանին կամ այլ մեխանիզմներին, որոնք սպառողներին հնարավորություն են տալիս իրականացնելու ժամանակի ընթացքում և երրորդ կայքերի շրջանում Ձեր առցանց գործունեության մասին անհատականացնող տեղեկատվության հավաքագրման հետ կապված ընտրություն: Բացի այդ, մենք գիտակցաբար չենք լիազորել երրորդ կողմերին հավաքել անհատականացնող տեղեկություններ ժամանակի ընթացքում և տարբեր կայքերի շրջանում Ձեր առցանց գործունեության մասին, երբ դուք օգտվում եք կայքերից:

10. Հավաստիացում

Օգտագործելով կայքը և Ձեր անձնական տեղեկությունները կամավոր ձևով մեզ տրամադրելով՝ դուք համաձայնում եք սույն Գաղտնիության քաղաքականության համաձայն այդ տեղեկատվության հավաքագրմանը և օգտագործմանը: Եթե դուք համաձայն չեք սույն Գաղտնիության քաղաքականության պայմաններին, խնդրում ենք մեզ չտրամադրել որևէ տեղեկատվություն և չօգտագործել մեր կայքերը:

11. Հետադարձ կապ

Գաղտնիության քաղաքականության վերաբերյալ ցանկացած հարց կամ մեկնաբանություն ունենալու դեպքում, խնդրում ենք կապվել մեզ հետ: Մենք ողջունում ենք ցանկացած տեսակի հաղորդակցություն էլեկտրոնային փոստի (customersupport@goodcredit.am) կամ 098588005 հեռախոսահամարի միջոցով: